ՀՀ պետական պարտքի դինամիկան, դրա կազմի և կառուցվածքի գնահատականը

Լևոնյան Ս.Ռ.
ՀՊՏՀ մագիստրանտ (Երևան, Հայաստան)
levonyansur@gmail.com

Վճռորոշ բառեր՝ պետական պարտք, արտաքին պարտք, կառավարության պարտք, ՀՆԱ, դինամիկա:

Динамика государственного долга Армении, его состав и структура

Левонян С.Р.
Ереванский государственный экономический университет (Ереван, Армения)
levonyansur@gmail.com

Резюме: В данной статье представлена динамика государственного долга, структура внешнего и внутреннего долга, удельный вес международных партнеров Армении во внешнем долге, некоторые показатели, которые показывают размер долгового бремени, такие как отношение внешнего долга к ВВП, индексы обслуживание внешнего долга / экспорт, внешний долг. процентная ставка долга / экспорт, был проведен количественный анализ динамики государственного долга.
Ключевые слова: государственный долг, внешний долг, долг правительства, ВВП, динамика

The dynamics of the state debt of Armenia, Assessment of its Composition and Structure

Levonyan S.R.
Yerevan State Economic University (Yerevan, Armenia)
levonyansur@gmail.com

Abstract: This paper presents the dynamics of government debt, the structure of external and internal debt, the weight of the international partners of Armenia in external debt, some indicators that show the size of debt burden, such as external debt / GDP ratio, indicators like external debt servicing / export, external debt interest rate / export and was performed quantitative analysis of state dept dynamics .
Keywords: state debt, external debt, government debt, GDP, dynamics

Սույն աշխատանքում ներկայացվել է ՀՀ պետական պարտքի դինամիկան, արտաքին և ներքին պարտքերի կառուցվածքը, ՀՀ միջազգային գործընկերների կշիռը արտաքին պարտքի մեջ, հաշվարկվել են մի քանի ցուցանիշներ, որոնք ցույց են տալիս պարտքի բեռի մեծությունը, օրինակ արտաքին պարտք/ ՀՆԱ հարաբերակցությունը, արտաքին պարտքի սպասարկում/ արտահանում, արտաքին պարտքի տոկոսավճար/ արտահանում ցուցանիշները և կատարվել է քանակական վերլուծություն:

Համաձայն «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի՝ պետական պարտքը Հայաստանի Հանրապետության և ՀՀ Կենտրոնական բանկի անունից ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարն է [**1**]: Պետական պարտքի հետ կապված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ միջազգային պայմանագրերով և այլ նորմատիվ իրավական ակտերով: Պետական պարտքը 2 բաղադրիչների հանրագումարն է՝ **ՀՀ Կառավարության պարտք և ՀՀ Կենտրոնական բանկի պարտք**

Պետական պարտքը ստանձնվում է ՀՀ-ի անունից՝ Կառավարության, պետական մարմինների և պետական հիմնարկների կողմից, և Կենտրոնական բանկի անունից: Հայաստանի Հանրապետությունում պետական պարտքի ներգրավումը հետապնդում է պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման և ընթացիկ իրացվելիության ապահովման, վճարային հաշվեկշռի աջակցության և պահուստների համալրման, ներքին պետական պարտքի շուկայի պահպանման և զարգացման նպատակ: Պետական պարտքի մարման գումարները պետք է վճարվեն սահմանված կարգի համաձայն: Պետական պարտքի բաղադ-

րիչներն են՝ **Ներքին պետական պարտք, արտաքին պետական պարտք և պետական երաշխիքներ:**

Ներքին պետական պարտքը ներառում է ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական գանձապետական և արտարժույթով թողարկված պարտատոմսերը, ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից կառավարությանը տրամադրված փոխառությունները և վարկերը, ինչպես նաև ներքին պետական երաշխիքները: Վերջիններս ՀՀ Կառավարության և Կենտրոնական բանկի կողմից համապատասխանաբար ՀՀ ռեզիդենտներին, ոչ ռեզիդենտներին և օտարերկրյա պետություններին տրամադրված բյուջետային և պետական երաշխիքներն են:

2018թ-ի տվյալներով՝ ՀՀ պետական պարտքը կազմել է **3348.9 մլրդ ՀՀ դրամ**, որը համարժեք է **6922.9 մլն ԱՄՆ դոլարի** [**6**]:, որը նախորդ տարվա համեմատ աճել է մոտ 2,2%-ով: Նույն տարվա տվյալների համաձայն՝ ՀՀ պետական պարտքի կառուցվածքում 90%-ը պատկանում է ՀՀ կառավարության պարտքին, իսկ 10%-ը՝ ԿԲ-ին:

Ընդհանրապես կարևոր է պետական պարտք / համախառն ներքին արդյունք հարաբերությունը: Այս համատեքստում յուրաքանչյուր պետություն սահմանում է պետական պարտքի մեծության թույլատրելի առավելագույն սահման: Հայաստանի Հանրապետությունում Կառավարության պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ չպետք է գերազանցի ՀՀ նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 60 տոկոսը [**1**]: Եթե կառավարության պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցում է ՀՀ նախորդ տարվա ՀՆԱ-ի 50 տոկոսը, ապա հաջորդ տարվա պետական բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցի ՀՀ համախառն ներքին արդյունքի՝ վերջին երեք տարիների ծավալների միջին ցուցանիշի 3 տոկոսը: 2016թ. տարեվերջին առաջին անգամ ՀՀ կառավարության պարտքը գերազանցել է նախորդ տարվա ՀՆԱ-ի 50%-ը՝ կազմելով 52.2%, որի արդյունքում 2017թ. ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը ծրագրվել է՝ հաշվի առնելով վերը նշված հարկաբյուջետային սահմանափակումը [**7**]: Տվյալ ցուցանիշի վատթարացման պատճառն է պարտքի անվանական աճի առաջանցիկ տեմպը ՀՆԱ-ի անվանական աճի համեմատությամբ:

Գծապատկերից պարզ է դառնում, թե ինչպիսի դինամիկա են դրսևորել այս 2 ցուցանիշները վերը նշված ժամանակահատվածի կտրվածքով: Ակնհայտ է, որ ՀՆԱ-ն մինչև 2008թ-ին ԱՄՆ-ում սկիզբ առած և ապա ողջ աշխարհում տարածված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը անընդհատ դրսևորում է աճի միտում, ապա 2009թ-ին կտրուկ կրճատվում է՝ ավելի քան 25.8%-ով նախորդ տարվա համեմատ: Սրան հակառակ պետական պարտքի ցուցանիշը 2009թ-ին կտրուկ մեծանում է՝ նախորդ տարվա համեմատ կազմելով շուրջ 177%: Ընդհանուր առմամբ, պարզ երևում է, որ ուսումնասիրված ժամանակաշրջանում մինչ 2008 թվականը ՀՆԱ-ի աճը ավելի առաջանցիկ տեմպ ուներ պետական պարտքի համեմատությամբ, սակայն ճգնաժամից հետո այն բավականին նվազել է, իսկ պետական պարտքը շարունակել է շատ մեծ տեմպերով աճել:

Արտաքին պետական պարտքը իրենից ներկայացնում է ՀՀ պետական պարտքի այն մասը, որը վերցված է օտարերկրյա՝ արտաքին աղբյուրներից: ՀՀ պետական պարտքի գերակշիռ մասը կազմում է արտաքին պետական պարտքը՝ շուրջ 80% 2018թ-ի դրությամբ [**8**]:

Արտաքին պետական պարտքի ձևավորման հիմնական գործիքը օտարերկրյա ֆինանսական, վարկային կազմակերպությունների, պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ կնքված վարկային պայմանագրերն են, այլ կերպ ասած՝ պետական վարկը: Այն իր մեջ ներառում է մեզ հայտնի վարկ կատեգորիային հատուկ բոլոր հատկանիշները՝ 1 կարևոր նախապայմանի պահպանմամբ. Այս դեպքում ֆինանսական հարաբերությունների կողմերից մեկը պարտադիր պետությունն է:

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 4-ից, Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը վերջին 10 տարիների ընթացքում անընդհատ դրսևորում է աճի միտում: Այն հատկապես զգալի է 2009թ-ին՝ նախորդ տարվա համեմատ կազմելով շուրջ 188%, որը բնականաբար բացատրվում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնա-

Գծապատկեր 1. ՀՆԱ-ի և Պետական պարտքի դինամիկան 2000-2018թթ [4]



Գծապատկեր 2. ՀՀ արտաքին պետական պարտքի դինամիկան 2007-2016թթ. (մլն դոլլար) [**8**]



*Գծապատկեր 3. ՀՀ կառավարության վարկերի և փոխառությունների կառուցվածքը՝ ըստ վարկատուների, 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ [**8**]*



Գծապատկեր 4. ՀՀ արտաքին պարտք / ՀՆԱ հարաբերակցությունը 2007-2018թթ (%) [8]



Աղյուսակ 5. Արտաքին պետական պարտքի բեռի գնահատման ցուցանիշներ

	Նվազ բեռ	Միջին բեռ	Ծանր բեռ	ՀՀ
Արտաքին պ.ի սպասարկում / արտահանում	<18%	18-30%	>30%	12%
Արտաքին պ.ի տոկոսավճար / արտահանում	<12%	12-20	>20%	3%

ժամի բռնկումով, իսկ ահա դրան հաջորդող տարիներին արդեն արտաքին պետական պարտքը հիմնականում շարունակել է կայուն աճ արձանագրել, սակայն բավականին մեծ աճ է գրանցվել 2016թ. և 2017թ-ին, երբ նախորդ տարվա համեմատությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը բացարձակ արտահայտությամբ աճել է համապատասխանաբար 489,4 և 689.3 մլն ԱՄՆ դոլարով կամ համապատասխանաբար 11,3% և14.3%-ով, որը եթե համեմատենք ՀՆԱ-ի հետ, ապա այն 2016թ.-ին նախորդ տարվա համեմատ նվազել է 0,1 %-ով, իսկ 2017 թ.-ին գրանցել է աճ մոտ 9,3%:

Ինչպես երևում է գծապատկերից, 2016թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքի մեջ գերակա տեսակարար կշիռ են կազմում միջազգային կազմակերպություններից ներգրավված միջոցները՝ կազմելով ընդհանուրի շուրջ 65.1%, իսկ դրանց ցանկում ՀՀ ամենախոշոր արտաքին վարկատուն Զարգացման միջազգային ընկերակցությունն է, որի տրամադրած փոխառու միջոցների տեսակարար կշիռը Կառավարության ընդհանուր պարտքի մեջ կազմում է 32.5%, ապա Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը՝ 17.7%, և Ասիական զարգացման բանկը՝ 13.1% մասնաբաժնով: Օտարերկրյա պետությունների շարքում ամենամեծ տեսակարար կշիռը պատկանում է Գերմանիային՝ 6.2%, այնուհետ Ռուսաստանի Դաշնությանը՝ 5.7%: Վարկատուների կառուցվածքում նախորդ տարվա համեմատությամբ ընդհանուր առմամբ մեկ տոկոսային կետով նվազել է միջազգային ֆինանսական կազմակերպությունների տեսակարար կշիռը [7], իսկ օտարերկրյա պետությունների մասնաբաժինն աճել է 1.7 տոկոսային կետով: Դա տեղի է ունեցել ի հաշիվ Գերմանիայի և Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված վարկերի գծով կատարված գործառնությունների, որոնց մասնաբաժիններն աճել են համապատասխանաբար՝ 0.8 և 1.1 տոկոսային կետերով:

Ներկայումս միջազգային պրակտիկայում արտաքին պետական պարտքի գնահատման նպատակով հաշվարկվող ցուցանիշներից առավել կարևոր է արտաքին պարտքի ծավալի հարաբերակցությունը համախառն ներքին արդյունքին, քանի որ այն հանդես է գալիս որպես պարտքի կուտակման նորմի ցուցանիշ և հնարավորություն է տալիս գնահատելու երկրի տնտեսության վրա ազդող պարտքի բեռի մակարդակը: Միջազգային պրակտիկայում այս ցուցանիշի համար որպես առավելագույն սահմանաչափ ընտված է 50%-ը: Ինչպես տեսնում ենք գծապատկեր 6-

ից, 2017թ-ի տվյալներով՝ ՀՀ-ում արձանագրված 47.7% ցուցանիշը թույլատրելի առավելագույն սահմանին զիջում է ընդամենը 2.3 տոկոսային կետով, և եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ պետական բյուջեի դեֆիցիտը և հետևաբար նաև պետական պարտքը կանխատեսումների համաձայն առաջիկա տարիներին շարունակաբար աճ են գրանցելու [**5**], ակնհայտ է, որ ՀՀ ներկայիս դրությունն այս առումով առավել քան վտանգավոր է: ՀՀ Ֆինանսների նախարարությունը հաշվարկում է պարտքի բեռի մի քանի ցուցանիշներ ևս. (տես աղյուսակ 5-ը).

Ինչպես երևում է աղյուսակից, Հայաստանի Հանրապետությունը այս 2 ցուցանիշների գծով դասակարգվում է որպես նվազ պարտքի բեռ ունեցող երկիր: Սրանց կարող ենք գումարել նաև արտաքին պետական պարտքի սպասարկման և պետական բյուջեի եկամուտների հարաբերակցությունը՝ 16%, ինչը նույնպես համապատասխանում է նվազ պարտքի բեռ ունեցող սանդղակին: Սրան զուգահեռ՝ Արժույթի միջազգային հիմնադրամը սահմանում է այսպես կոչված «ցածր եկամուտ ունեցող» երկրների համար արտաքին պարտքի բեռի 3 մակարդակ՝ ցածր, միջին և բարձր, համապատասխանաբար՝ ՀՆԱ 30%, 40% և 50% մակարդակներով, ինչը նշանակում է, որ ՀՀ պետական պարտքի մեծությունը, համաձայն այս մեթոդաբանության, կարելի է գնահատել որպես միջին և ծանր բեռի միջանկյալ կետում:

Ուսումնասիրելով ՀՀ պետական պարտքի կազմը և կառուցվածքը, արտաքին պետական պարտքի շարժընթացը, կատարելով համապատասխան ցուցանիշների հաշվարկ և վերլուծելով դրան՝ կարող ենք հանգել հետևյալ եզրակացություններին.

- Պետական պարտքի արդյունավետ կառավարումը օրակարգային խնդիր է Հայաստանի Հանրապետության համար:
- Հայաստանի Հանրապետության ֆինանսատնտեսական համակարգի հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ունեն պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման ներուժային հնարավորությունների բացահայտումը և օգտագործումը, պարտքի կառավարման համակարգի կատարելագործումը:

Հաշվի առնելով 2017թ-ի արդյունքներով ՀՀ կառավարության պարտք / ՀՆԱ հարաբերակցության 47.7% ցուցանիշը՝ անհրաժեշտ է առավել զգույշ և ուշադիր լինել նոր պարտքի ներգրավման և պարտքային պարտավորությունների մարման հարցում, որպեսզի հնարավոր լինի խուսափել դեֆոլտ հայտարարվելու վտանգից:

Օգտագործված աղբյուրների ցանկ

1. «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, 2008թ, www.Arlis.am
2. ՀՀ Վիճակագրական կոմիտե <<ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը>> հրապարակումներ, 2000-2018թթ, https://www.armstat.am
3. www.minfin.am՝ ՀՀ Ֆինանսների նախարարության պաշտոնական կայք,
4. http://www.minfin.am/hy/chart/
5. «ՀՀ 2018թ-ի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծ, www.minfin.am
6. ՀՀ պետական պարտքի տարեկան հաշվետվություն 2018թ, www.minfin.am
7. ՀՀ պետական պարտքի տարեկան հաշվետվություն 2016թ, www.minfin.am
8. https://www.armstat.am

Сдана/Հանձնվել է՝ 24.10.2019
Рецензирована/Գրախոսվել է՝ 2.11.2019
Принята/Ընդունվել է՝ 6.11.2019